

Պողոսեան Կերեճ

Քերականորեն աշխարհագրաբան շեշտի

Բ. Կարի

491.99-5

Պ-79

ՊԼՄԳԻԿ

1936

491-99-5
Պ-79

Mrs. John Chidley
22 Bates Rd
arl. mass.
MAY 20 1936


ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵՋՈՒԻ

Բ. ՏԱՐԻ

ԳՐԵՑ

Հ. ԵՓՐԵՄ ՊՕՂՈՂԵԱՆ
ՄԽԻԹ. ՈՒԽՏԷ



Պ Լ Ո Վ Դ Ի Ի 1936

Յպ. «ՆՈՐ ՏԱՌ» Պոլիգրա. ուլ. Եաֆիմ Կրուեկ 27

23 JUL 2013

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ




Ասխարհաբար Քերականութեան այս
Ք. Հատորիկը՝ շարունակութիւնն է Ա. Հատորի-
կին, որ անցեալ տարի լոյս տեսաւ:

Ա. Հատորին մէջ նկատի առած էինք
քերականութեան տարրական գիտելիքներէն Բա-
ռակազմութիւնը, Առոգանութիւնը, Տողադար-
ձը, Ուղղագրութիւնը, Գոյականը՝ իր թիւով ու
հոլովով, Յօդը, Ածականը և Գերանունը: Իսկ
Ք. Հատորի մէջ պիտի աւանդենք Բայի եւ ա-
նոր խնդիրներուն, Ենթակայի, Բայի համա-
ձայնութեան, Մակբայի, Նախադրութեան,
Շաղկապի, Զայնարկութեան, Ասորագելիի,
Յասկացուցիչ - Յասկացեալի եւ Կիսադրու-
թեան տարերքը: Այս Ք. Հատորով Ա. Հատո-
րը կ'ամբողջանայ եւ երկուքը միասին մեր Աշ-
խարհաբար Քերականութեան Ա. Մասը կը կազ-
մեն, որով քերականութեան տարրական գիտե-
տելիքները համառօտ՝ բայց լրիւ աւանդուած
կ'ըլլան:

Մայիս 1936

Հեղինակը



3242-69

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ

Բ. ՏԱՐԻ

Ա. Դաս. — Բայ

1. Բայը ընել կամ ըլլալ կը ցուցնէ: Օրինակ. աշխատիլ, երգել. մեծնալ, ծերանալ:

2. Բայը ունի 1. եղանակ, 2. ժամանակ, 3. թիւ և 4. դէմ:

3. Եղանակը չորս է. 1. սահմանական, 2. ստորադասական, 3. հրամայական և 4. անորոշ եղանակ կամ գերբայ:

Ա. Ընթերցուած. — Անասուններուն օգտակարութիւնը

Բոլոր անասուններն օգտակար են մարդուն: Շունը կը պահէ առնը, կատուն մուկերը կը ջնջէ. կովը, այծն ու ոչխարը կաթ կու տան: Զին կառք կը քաշէ, Զորին ու էշը բեռ կը կրեն: Խոզը միս կու տայ, Սագը, բազն ու հաւը հաւկիթ կ'ածեն ու միս ու փետուր կու տան: Շատ մ'անասուններ ալ իրենց թանկագին մարթովը կամ միսովը օգտակար կ'ըլլան մարդուն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

1. Օրինակեցե՛ք վերի ընթերցուածը եւ ԲԱՅՆՈՒՆ ՏԱԿ ԳԻՐՔ ԲԱՇԵՑԷՔ:

2. Բերանացի մեյ մեկ ԽՕՍՔ ՇԻՆԵՑԷՔ հետեւեալ բայերով:

Գրել, նուագել, փորել, դանել, խօսիլ, սառել, գանիլ, տանիլ, կարդալ, դառնալ, հաղալ, խաղալ, առնուլ, թողուլ, զբօսնուլ:

Օրինակ. ես դասս կը գրեմ:



Բ. Դաս. -- Բային ժամանակը

4. Ժամանակը կը ցուցնէ թէ գործողութիւնը ե՞րբ կ'ըլլայ:

5. Ժամանակը երեք է. ներկայ, անցեալ, ապառնի: Ներկայ է, երբ ըսեմ. հիմա, կը գրեմ. անցեալ՝ երէկ գրեցի, ապառնի՝ վաղը պիտի գրեմ:

Բ. Ընթերցուած. — Հայրենի սնակս

Ի՞նչ կայ աւելի սիրելի, քան հայրենի անակը. Փոքր է մեր դիւղը, աղքատ՝ մեր անակը: Անոր մէջ բնակող ծնողացս սրտերը սակայն զիս ջերմօրէն կը սիրեն: Մեր անակը՝ արեւու ճառագայթներէն կը լուսաւորուի: Պաղտի ողիւյզները՝ պատուհանէս ներս կը սողոսկին: Ծառերու փնջիկ մը չըրջապատած է մեր անակը, երկնքի թռչուններն են անակիս երգեցիկները: Թաղաւորի պալատին հետ չեմ փոխեր հայրենի անակս:


ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

3. Օրինակեցե՛ք վերի ընթերցուածը եւ ԲԱՅԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԻՔ:

4. Ըսե՛ք թե յաջորդ քայերէն ո՞րը ներկայ, անցեալ, կամ ապառնի է:

Սենեակիս մէջ կ'ԱՇԽԱՏԻՄ. երէկ համակ ըս-

ՏՈՅՍ: Շարաթ մը վերջ հայրս ՊԻՏԻ ԳԱՅ: Դուն գասդ ՍՈՐՎԵՑԱՐ: Հօրեղբայրդ խանութ կ'ԵՐԹԱՅ: Մեր ձին ձեր կառքը ՊԻՏԻ ՔԱՇԵ:



Գ. Դաս. — Բային թիւը

6. Բային թիւը գործողութիւն ընողին մէկ կամ աւելի ըլլալը կը ցուցնէ և երկու է. եզակի և յոնակի: Օրինակ. ես կը կարդամ (եզակի), մենք կը կարդանք (յոքնակի). տղան կը գրէ (եզակի), տղանք կը գրեն (յոքնակի):

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

5. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԵԶԱԿԻ ԲԱՅԵՐԸ ՍՏՈՐԱԳԾԵՑԻՔ:

Մեղուն ծաղիկներուն հիւթերը կը ծծէ: Վառարանին ծուխը ողբ կը բարձրանայ: Տղաք պտոյտի դացին: Գնդակը կորսուեցաւ: Սաթենիկ ժանեակ կը հիւսէ: Շոգեկառքին կաթսան պայթեցաւ: Սեւ Ծովը յաճախ կ'ալեկոծի: Առիւծը վազրին թշնամին է: Ի՞նչ կ'ընես, աղա՛յ:

6. Բերանացի ՅՈՒՆԱԿԻ ԸՐԷՔ հետեւեալ խօսքերը Արժիւք կը սաւառնի. Գեաը կը յորդի: Ես կը դժեմ: Աղաւնին կը մնչէ: Հրդեհը կը ծաւալի: Զիւնը կը հալի: Տղան կու լայ: Մայրիկը կ'աղօթէ: Օրինակ. Արժիւքերը կը սաւառնին:



Գ. Դաս. — Բային դէմք

7. Բային դէմք կը ցուցնէ թէ գործողութիւնը ո՞ր անձը կ'ընէ:

8. Գէմքը երեք է.

Եզակի

- Ա. դեմք ես կը գովեմ
- Բ. դեմք Դուք կը գովես
- Գ. դեմք Ան կը գովի

Յոճնակի

- Մենք կը գովենք
- Դուք կը գովեք
- Անոնք կը գովեն.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

7. Գրեցեք վարի խօսերը եւ ԲԱՅՆՐՈՒՆ Ա. ԴԷՄՔԵՐԸ (ԵԶԱԿԻ ԵՒ ՅՈՒՆԱԿԻ) usnrագծեցեք:

Ես էի կեանքդ ազատողը: Ան ալ իր պաշտօնէն ինկաւ: Դո՛ւն ես՝ որ պիտի գայիր, Դուք ե՛րբ ճամբայ պիտի ելլէք: Մենք արդէն տեսած ենք այդ բաները: Ինքն էր, որ կ'ըսէր թէ հոս չի գտնուիր: Իրենք ալ չեն գիտեր թէ ի՛նչ պիտի ընեն. ես արդէն ըսի ձեզի. Մենք շատ յորդորեցինք, բայց չհամողուեցաւ:

8. Բերանացի ըսեք թե յաջորդ խօսերուն մէջ Ո՞Ր ԴԷՄՔԵՐԸ կան:

Դուք կը զբօսնուս: Մենք կ'աշխատինք: Ես կը կարէի: Ան կ'երթայ, Դուք եկէք, Անոնք կը ճաչեն: Ինքը կը խօսի: Վաղը պիտի մեկնիմ: Ի՛նչ առաջ կու լայիր, Այսօր կը գրե՞ն:



Ե. Դաս. — Բայերուն լծորդութիւնը

9. Բայերուն փոխուելուն խոնարհում կ'ըսենք:

10. Բայերը տեսակ տեսակ խոնարհումներ ունին, որոնց կ'ըսենք լծորդութիւն: Օրինակ. երգել՝ կ'ըլլայ երգեցի, խօսիլ՝ կ'ըլլայ խօսեցայ, կարգալ՝ կ'ըլլայ կարգացի:

11. Լծորդութիւնները՝ բայերուն աներեւոյթ ժամանակին վերջաւորութենէն կ'որոշուին

և երեք են.

- Առաջին՝ - ել օրինակ. գրել
- Երկրորդ՝ - իլ " ստրվիլ
- Երրորդ՝ - ալ " խաղալ

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

9. Օրինակեցեք վարի խօսերը եւ ԲԱՅՆՐՈՒՆ ՎՐԱՅ Ա. Բ. Գ. ՈՎ ՆՇԱՆԱԿԵՑԷՔ ԹԷ ՔԱՆԵՐՈՐԳ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԿԸ ՎԵՐԱԲԵՐԻՆ:

Մարդը կրնայ խօսիլ, կարգալ, գրել, մտածել, պոռալ, երգել, աշխատիլ, Առիւծն ու վագրը կը բնան մանչել: Գայլերը կրնան սանալ: Շները կրնան հաջել: Կատուները կրնան մշաւել ու նուալ: Մեղուն կրնայ բզգալ: Եզն ու կովը կրնան բառաչել: Խոզը կրնայ խանչել: Ձին կրնայ խիւնչել. էջը կրնայ զոալ:

10. Գտեք մեյ մեկ բայ ա. բ. գ. շնորհուրեան սակ զացող:



2. Դաս. — Էական բայ

12. Էական բայը ըլլալ կը ցուցնէ և միւս բայերուն հիմը կամ արմատն է:

13. Էական բայը սահմանական ներկայի եւ անկասարի մէջ երկու ձեւ ունի և հետեւեալն է.

Սահմանական եղանակ

Ներկայ Ա. Ձեւ

| | |
|---------|----------|
| Եզակի | Յոճնակի |
| Ես եմ | Մենք ենք |
| Դուք ես | Դուք էք |
| Ան է | Անոնք են |

Ներկայ Բ. Ձեռ

| | |
|---------|----------|
| Եզակի | Յոֆնակի |
| Կ'ըլլամ | Կ'ըլլանք |
| Կ'ըլլաս | Կ'ըլլաք |
| Կ'ըլլայ | Կ'ըլլան |

Անկասար Ա. Ձեռ

| | |
|----------|-----------|
| Եզակի | Յոֆնակի |
| Ես էի | Մենք էինք |
| Դուն էիր | Դուք էիք |
| Ան էր | Անոնք էին |

Անկասար Բ. Ձեռ

| | |
|-----------|------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Կ'ըլլայի | Կ'ըլլայինք |
| Կ'ըլլայիր | Կ'ըլլայիք |
| Կ'ըլլար | Կ'ըլլային |

Կասարեալ

| | |
|-------|---------|
| Եզակի | Յոֆնակի |
| Եղայ | Եղանք |
| Եղար | Եղաք |
| Եղաւ | Եղան |

Ապստոնի

| | |
|------------|-------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Պիտի ըլլամ | Պիտի ըլլանք |
| Պիտի ըլլաս | Պիտի ըլլաք |
| Պիտի ըլլայ | Պիտի ըլլան |

Անկասար ապստոնի

| | |
|--------------|---------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Պիտի ըլլայի | Պիտի ըլլայինք |
| Պիտի ըլլայիր | Պիտի ըլլայիք |
| Պիտի ըլլար | Պիտի ըլլային |

ՀՐԱՀԱՆԳ

11. Օրինակեցեք հետեւեալ խօսքերը՝ ԷԱԿԱՆ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵԼՈՎ:

Ան գիտնական մարդ մըն է: Ատոնք շատ ազնիւ են: Հայրդ մշակ էր: Երէկ քաղաքին պարտեզը դացեր էին: Նոր հազուստեղ գոհ եղա՞ր: Քիչ մնաց դուք ալ հիւանդ կ'ըլլայիք: Հինգ տարիէն շրջանաւարտ կ'ըլլաս: Եթէ հոս չգայիք՝ հիմայ ո՛ւր պիտի ըլլայիք: Այսօր ժամը երեքին Պարիս պիտի ըլլայի: Բայց՝ պիտի չըլլամ:



Է. Դաս. — Էական բայ (շարունակորէրն)

Ստորագասական եղանակ

Ներկայ

| | |
|-------|---------|
| Եզակի | Յոֆնակի |
| Ըլլամ | Ըլլանք |
| Ըլլաս | Ըլլաք |
| Ըլլայ | Ըլլան |

Անկասար

| | |
|---------|----------|
| Եզակի | Յոֆնակի |
| Ըլլայի | Ըլլայինք |
| Ըլլայիր | Ըլլայիք |
| Ըլլար | Ըլլային |

Հրամայական եղանակ

| | |
|-------------------------|-------|
| Եզի՛ր | Եղէ՛ք |
| Անորո՞ւ եղանակ (ղերբայ) | |
| Անեռեռոյր | |
| Ըլլա՛ւ | |

Ընդունելութիւն ներկայ
 Եղող
 Ընդունելութիւն անցեալ
 Եղած, Եղեր
 Ընդունելութիւն ապառնի
 Ըլլալու, Ըլլալիք
 ՀՐԱՀԱՆԳ

12. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԷՍԿԱՆ ԲՍ-
 ՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՒՒ:

Եթէ ազնիւ ու բարի ըլլաք՝ ամէն ժարդէ
 կը սիրուիք: Երանի թէ ամէն ժարդ այդպէս ըլ-
 լար: Վաղը ժամը ութին հոս եղէք: Կրնա՞ս պա-
 սուաւոր ըլլալ, ամէնուն վստահութիւնը կը գրա-
 լետ: Հիւանդ եղող ժարդը՝ կ'երթայ կը պառկի: Հա-
 զիւ շրջանաւարտ եղած՝ մեկնի՞լ կ'ուզես: Տղա՛ս,
 ճշմարտապէս եղեր: Եթէ այդ բարձունքէն իյնայիր՝
 կտոր կտոր կ'ըլլայիր:



Ը. Դաս. — Առաջին լծորդութիւն — ԵԼ

15. Առաջին լծորդութեան տակ կ'երթան
 ԵԼ վերջացող բայերը, որոնք հետեւեալ կեր-
 պով կը խոնարհին:

| | |
|-------------------|----------|
| Սահմանական եղանակ | |
| Ներկայ | |
| Եզակի | Յո՛վնակի |
| Կը գրեմ | Կը գրենք |
| Կը գրես | Կը գրէք |
| Կը գրէ | Կը գրեն |

Անկասար

| | |
|----------|-----------|
| Եզակի | Յո՛վնակի |
| Կը գրէի | Կը գրէինք |
| Կը գրէիր | Կը գրէիք |
| Կը գրէր | Կը գրէին |

Կասարեալ

| | |
|--------|----------|
| Եզակի | Յո՛վնակի |
| Գրեցի | Գրեցինք |
| Գրեցիր | Գրեցիք |
| Գրեց | Գրեցին |

Ապառնի

| | |
|-----------|------------|
| Եզակի | Յո՛վնակի |
| Պիտի գրեմ | Պիտի գրենք |
| Պիտի գրես | Պիտի գրէք |
| Պիտի գրէ | Պիտի գրեն |

Անկասար ապառնի

| | |
|------------|-------------|
| Եզակի | Յո՛վնակի |
| Պիտի գրէի | Պիտի գրէինք |
| Պիտի գրէիր | Պիտի գրէիք |
| Պիտի գրէր | Պիտի գրէին |



ՀՐԱՀԱՆԳՆԵՐ


13. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերը եւ Ա.
 ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ (1) ԲՍ.ՅԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ԲԱՇԵՑԷՒՒ:
 Երկու ժամէ ի վեր քեզի կը սպասեմ: Տղայ մը
 գետէն ազատեցինք: Չարագործները կը բռնեն ու

1) Բայի մը ո՛ր լծորդութեան տակ երբայն ի-
 մանադու համար՝ պէ՛տք է բային աներեւոյթր գտնել:

չղթայով կը կապեն: Մրցումի համար երկու հոգի միասին կը վազէին: Զքեզ հոս կանչեցինք, վասն զի խնձոր պիտի քաղենք: Տակառները երէկ պիտի պարպէինք: Տաք օդերուն շատ ջուր կը խմենք: Ինձմէ ի՞նչ կ'ուզես:

14. Բերանացի խոնարհեցե՛ք վարի բայերուն ՆԵՐԿԱՆ, ԿՍՏՍՐԵՍԱԼՆ ՈՒ ԱՊՍՌՆԻՆ:

Խմել, ժողովել, գովել, կանչել, երգել, հանել, ձգել



Թ. Դաս. — Ա. Լծորդութիւն (շարունակութիւն)

Ասորագասական եղանակ

Ներկայ

| | |
|-------|---------|
| Եզակի | Յոֆնակի |
| Գրեմ | Գրենք |
| Գրես | Գրէք |
| Գրէ | Գրեն |

Անկասար

| | |
|-------|---------|
| Եզակի | Յոֆնակի |
| Գրէի | Գրէինք |
| Գրէիր | Գրէիք |
| Գրէր | Գրէին |

Հրամայական եղանակ

Գրէ՛ Գրեցէ՛ք

Անորո՛ք եղանակ (ղերբայ)

Անեղեռն յք

Գրել

Ընդունեցուցիւն ներկայ

Գրող

Ընդունեցուցիւն անցեալ

Գրած, Գրեր

Ընդունեցուցիւն սպասնի

Գրելու, Գրելիք

ՀՐՍ.ՀԱՆԳ

15. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ Ա. ԼԾՈՐ-ԴՈՒԹԵԱՆ ԲՍՅԵՐՈՒՆ ԱՏՈՐԱԴԱՍՍԿԱՆ, ՀՐԱՄՍՅԱ-ԿԱՆ ՈՒ ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԱՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Սորէ՛ն, լաւ կ'ըլլայ որ այսօր նամակդ գրես: Եթէ ուզէիր՝ կրնայիր բռնել թիթեռնիկը՝ վազէ՛, հո՛ս կանչէ եղբայրդ: Ի՞նչպէս եղաւ որ այդքան խոզ եղար: Տակառին ջուրը պարպեր ու մէջէն քարերը հաներ եմ, եթէ զինքը գովեմ՝ կը շփանայ: Զեռքէ ձեռք բռնեցէ՛ք: Զքեզ ազատել չեմ կրնար: Թէ՛ խոզ ես եւ թէ՛ կ'ուրանաս: Գրած ատեն՝ շիտակ բռնէ գրիչը՛:



Ժ Դաս. — Երկօրդ Լծորդութիւն - Ի՛

17. Երկօրդ Լծորդութեան տակ կ'երթան Ի՛, վերջացող բայերը, որոնք հետեւեալ կերպով կը խոնարհին:

Սահմանական եղանակ

| | | |
|-----------|--------|------------|
| | Ներկայ | Յոֆնակի |
| Եզակի | | |
| Կը սորվիմ | | Կը սորվինք |
| Կը սորվիս | | Կը սորվիք |
| Կը սորվի | | Կը սորվին |

Անկասար

| | |
|------------|-------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Կը սորվէի | Կը սորվէինք |
| Կը սորվէիր | Կը սորվէիք |
| Կը սորվէր | Կը սորվէին |

Կասարեալ

| | |
|----------|-----------|
| Եզակի | Յոֆնակի |
| Սորվեցայ | Սորվեցանք |
| Սորվեցար | Սորվեցաք |
| Սորվեցաւ | Սորվեցան |

Ապառնի

| | |
|-------------|--------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Պիտի սորվիմ | Պիտի սորվինք |
| Պիտի սորվիս | Պիտի սորվիք |
| Պիտի սորվի | Պիտի սորվին |

Անկասար ապառնի

| | |
|--------------|---------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Պիտի սորվէի | Պիտի սորվէինք |
| Պիտի սորվէիր | Պիտի սորվէիք |
| Պիտի սորվէր | Պիտի սորվէին |

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

16. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ Բ. ԷՄՈՐ-ԴՈՒԹԵԱՆ ԲԱՅՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԵՔ:

Մենք քաղքին մեծ փողոցին մէջ կը բնակինք, Շատ հաւնեցան ձեր այդ վարմունքին: Ծառին առկը նստեցանք ու խօսեցանք: Քիչ առաջ ո՞ւր կը նայէիր: Հիմայ դո՛ւք պիտի աշխատիր: Երկար պիտի ապրէիր, եթէ ժուժկալ ըլլայիր: Ձմեռը ցրտէն կը սառէինք, ինչո՞վ սահեցար սառոյցին վրայ: Ո՛չ թէ սահեցայ, այլ ցրտէն սառեցայ:

17. Բերանացի խոնարհեցե՛ք յաջորդ քայերուն ՍԱՀՄԱՆՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ:

Պառիլի, նայիլ, հաւնիլ, խորհիլ, նստիլ, սառիլ:



ԺԱ. Դաա.— Երկրորդ լծուղութիւն (շարունակութիւն)

18. Ասորագասական եղանակ

Ներկայ

| | |
|--------|---------|
| Եզակի | Յոֆնակի |
| Սորվիմ | Սորվինք |
| Սորվիս | Սորվիք |
| Սորվի | Սորվին |

Անկասար

| | |
|---------|----------|
| Եզակի | Յոֆնակի |
| Սորվէի | Սորվէինք |
| Սորվէիր | Սորվէիք |
| Սորվէր | Սորվէին |

Հրամայական եղանակ

| | |
|--------|-----------|
| Սորվէ՛ | Սորվեցէ՛ք |
|--------|-----------|

Անորոշ եղանակ (դերբայ)

Անընտրոյթ

Սորվիլ

Ընդունելութիւն ներկայ

Սորվող



Ընդունեցորքիւն անցեալ

Սորված, Սորվեր


Ընդունեցորքիւն ապառնի

Սորվելու, Սորվելիք

ՀՐԱՀԱՆԳ

18. Օրինակեցե՛ք վարի խօսքերը՝ Բ. ԷԾՈՐ-
ԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ՍՏՈՐԱԳՍՍԿԱՆ, ՀՐԱՄՍՅԱ-
ԿԱՆ ՈՒ ԱՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵԼՈՎ:

Եթէ հաւնիք՝ նորէն կը բերեմ, Թէ որ երկար
ապրիս՝ շատ բան պիտի տեսնես: Թող աշխատէին
որ անօթի չմնային: Նստէ՛, աշխատէ՛, Պէտք է
յողնիլ՝ հանգստանալու համար: Եթէ սա պատուհն-
քուն հաւնող կայ՝ թող նստի ուտէ: Քրտնած ատեն
ջուր մի՛ խմէք: Մինչեւ հիմայ ո՛րքան մարդիկ են
ապրեր ու մեռեր:



ԺԲ. Դաս.— Երբորդ լծորդութիւն — ԱԼ

19. Երբորդ լծորդութեան բայերը աներե-
ւոյթի մէջ — ԱԼ կը վերջաւորին և հետեւեալ
կերպով կը խոնարհին.

Սահմանակա՛ն եղանակ

Ներկայ

| | |
|----------|-----------|
| Եզակի | Յոֆնակի |
| Կը խաղամ | Կը խաղանք |
| Կը խաղաս | Կը խաղաք |
| Կը խաղայ | Կը խաղան |

Անկասար

| | |
|------------|-------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Կը խաղայի | Կը խաղայինք |
| Կը խաղայիր | Կը խաղայիք |
| Կը խաղար | Կը խաղային |

Կասարեալ

| | |
|---------|----------|
| Եզակի | Յոֆնակի |
| Խաղացի | Խաղացինք |
| Խաղացիր | Խաղացիք |
| Խաղաց | Խաղացին |

Ապառնի

| | |
|------------|-------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Պիտի խաղամ | Պիտի խաղանք |
| Պիտի խաղաս | Պիտի խաղաք |
| Պիտի խաղայ | Պիտի խաղան |

Անկասար ապառնի

| | |
|--------------|---------------|
| Եզակի | Յոֆնակի |
| Պիտի խաղայի | Պիտի խաղայինք |
| Պիտի խաղայիր | Պիտի խաղայիք |
| Պիտի խաղար | Պիտի խաղային |

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

19. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերը՝ և Գ. ԼԼ-
ԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԷՔ:

Ինչ տեսակ գիրք կը կարդաս՝ ա՛յն տեսակ
մարդ ես: Պիտի ջանամ միշտ ճշդապա՛հ մնալ: Լաւ
խաղացիք: Հիմայ ալ աշխատեցէ՛ք: Աստուծոյ ջա-
ղացքները կամաց՝ բայց լաւ կ'աղան, կ'ըսէ գերմա-
նական առածը. Հոս պիտի մնայիք, վասն զի այդ-

պէս կը բաղձայինք: Շատ յուսացին որ իրենց վը-
րայ պիտի խղճանք: Ինչո՞ւ այդքան կը պռռաք:
Ինչո՞ւ պիտի պռռայի, եթէ պատճառ չըլլար:

20. Բերանացի խոնարհեցե՛ք յաջորդ բայերուն
ՍՍ.ՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԸ.

Հաղալ, լուալ, կարգալ, հաւատալ, անսալ,
ջանալ.



ԺԳ. Դաս.— Երբորդ լծորդութիւն
(շարունակութիւն)

20. Ասորագասական եղա նակ

Ներկայ

| | |
|-------|----------|
| Եզակի | Յո՛վնակի |
| Խաղամ | Խաղանք |
| Խաղաս | Խաղաք |
| Խաղայ | Խաղան |

Անկասար

| | |
|---------|----------|
| Եզակի | Յո՛վնակի |
| Խաղայի | Խաղայինք |
| Խաղայիք | Խաղայիք |
| Խաղար | Խաղային |

Հրամայական եղանակ

Խաղա՛ Խաղացե՛ք

Անորոճ եղանակ (գերայ)
Անե՛րեւոյր
Խաղալ

Ընդունեցորթիւն ներկայ

Խաղացող

Ընդունեցորթիւն անցեալ

Խաղացած, խաղացեր

Ընդունեցորթիւն ապստոնի

Խաղալու, խաղալիք

ՀՐԱ.ՀՍ.ՆԳ

21. Գրեցե՛ք հետեւեալ խօսքերը եւ Գ. ԼԾՈՐ-
ԴՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՈՒ Ա-
ՆՈՐՈՇ ԵՂԱՆԱԿՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՒ:

Եթէ ջանաս՝ դիւրին է ամէն բան: Խղճացե՛ք
աղքատներուն: Երանի՛ թէ հոս մնայիք: Ամէնքն
ալ սկսան հաղալ: Յուսացող մարդը՝ պիտի չամչնայ:
Ամբողջ ցորենն աղացեր է: Ծնողքիդ անսա՛: Թող
կարգայիք, ինչո՞ւ խաղացիք: Չեմ կրնար հոս մը-
նալ: Ի՞նչ կը խոկաս:



ԺԳ. Դաս.— Ա. լծորդութեան գարսու-
ղիները

21. ԳՏՆԵԼ, ՏԵՍՆԵԼ, ՊԱԳՆԵԼ, ՄՏՆԵԼ, ԵԼ-
ԼԵԼ (ԵՂՆԵԼ), ԹՔՆԵԼ, ՀԵԾՆԵԼ, ԽԱԾՆԵԼ, ԻՋՆԵԼ (ԻՋ-
ՆԱԼ), բայերը Ա. Լծորդութեան առկ կ'երթան, սա-
կայն կ'ասարեալի, Հրամայականի եւ Ընդունեցորթիւն
Անցեալի մէջ կը գարսուղին ու կ'ըլլան. Կատարեալ՝
ԳՏԱՅ, ՏԵՍԱՅ, ՊԱԳԱՅ, ՄՏԱՅ, ԵԼԱՅ, ԹՔԱՅ, ՀԵԾԱՅ,
ԽԱԾԱՅ, ԻՋԱՅ. Հրամայական՝ ԳՏԻՐ, ՏԵ՛Ս, ՊԱ՛Գ,
ՄՏԻՐ, Ե՛Լ, ԹՔԻՐ, ՀԵԾԻՐ, ԽԱ՛Ծ կամ ԽԱԾԷ՛, ԻՋԻՐ.
Ընդունեցորթիւն Անցեալ. ԳՏԱԾ, ՏԵՍԱԾ, ՊԱԳԱԾ,

ՄՏԱԾ, ԵԼԱԾ, ԹՔԱԾ, ՀԵԾԱԾ, ԽԱԾԱԾ, ԻՋԱԾ.

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

22. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերը եւ Ա. ԼԸ-ԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Երէկ կենդանաբանական պարտէզը տեսանք: Վերադարձիս՝ դեղեցիկ մանեակ մը գտայ: Հայաստանի մէջ՝ նորահարսը մեծ ու փոքր խնամիներուն ձեռքերը կը պահէր: Խնդրեմ, նե՛րս մտէք: Զեղմէ ո՞վ ելած է Մասիսի գագաթը: Անկրթութիւն է փողոցը թքնել: Նախ տե՛ս, ապա գարմացիր: Դեռ այս դռնէն ներս չեմ մտած: Բարձրութենէդ վա՛ր իջիր:

23. Բերանացի խոնարհեցե՛ք վարի բայերը: Մանել, տեսնել, գանել, թքնել, հեծնել, խածնել:



ժԵ. Դաս.— Բ. լծորդութեան գարսուղիները

22. ԵՐԿՐՈՐԳ ԼԾՈՐԴՈՒԹԵԱՆ գարսուղիներն են. ՀԱՍՆԻԼ, ԱՆՑՆԻԼ, ՄԵՌՆԻԼ, ԾՆԱՆԻԼ, ՀԱՏՆԻԼ, ՀԱԳՆԻԼ և ԶԻԼ վերջացողները. ԹՌԶԻԼ, ՓԱԽԶԻԼ, ԼՆ, որոնց կատարեալը կ'ըլլայ. ՀԱՍԱՅ, ԱՆՑԱՅ, ՄԵՌԱՅ, ԹՌԱՅ, ՓԱԽԱՅ ևն, Հրամայականը՝ ՀԱՍԻՐ, ԱՆՑԻՐ, ԹՌԻՐ ևն. Ընդունելութիւն Անցեալը՝ ՀԱՍԱԾ, ԱՆՑԱԾ, ԹՌԱԾ, ևն.

23. ՍԿՍԻԼ, ՓՐԹԻԼ, ՊՐԾԻԼ բայերը միայն կատարեալի մէջ գարտուղի են և կ'ըլլան. ՈԿՍԱՅ, ՊՐԾԱՅ, ՓՐԹԱՅ.

24. ՆՍՏԻԼ՝ կատարեալը կ'ըլլայ՝ ՆՍՏԱՅ և ՆՍՏԵՑԱՅ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

24. Օրինակեցե՛ք յաջորդ խօսքերը եւ Բ. ԼԸ-

ԾՈՐԴՈՒԹԵԱՆ ԶԱՐՏՈՒՂԻ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Մեռած մարմինը դիակ կ'ըսուի: Այդքան շո՛ւտ մեռաւ: Առիւծը գառագեղէն (վանդակէն) փախած է: Հասի՛ր ու անցի՛ր ամէնքը: Երկրաշարժէն շատ տներ փլան: Ծնած մարդիկ աւելի շատ են՝ քան մեռած մարդիկ: Հագէ՛ք ձեր համազգեստները: Երկրին դըրամը հատաւ: Օղապարիկով տասնուվեց հազար մեւտը բարձր թռաւ Պիկկարտ: Առտու սկսայ դաստ սորվիլ: Լեռնէն քար մը փրթաւ: Անոր ձեռքէն պրծաք:

25. Բերանացի խոնարհեցե՛ք հետեւեալ բայերը: Դպչիլ, բուսնիլ, փախչիլ, սկսիլ, պրծիլ:



ժԶ. Դաս.— Գ. լծորդութեան գարսուղիները

25. ՆԱԼ վերջացող բայերը Գ. լծորդութեան տակ կ'երթան, բայց կատարեալի, Հրամայականի եւ Ընդունելութիւնի ներկայի եւ Անցեալի մէջ Ն գիրը կ'ը կՈՐՄԱՑՆԵՆ եւ կը զարտուղին: Օրինակ. Մոռնալ՝ կ'ըլլայ ՄՈՌՑԱՅ, ՄՈՌՑԻՐ, ՄՈՌՑՈՂ, ՄՈՌՑԱԾ:

26. Այսպէս կը խոնարհին նաեւ. իմանալ, ճանչնալ, զիմանալ, գողնալ, վախնալ, կեղնալ, անչնալ, տախնալ, մոտեցնալ, հասկնալ, եւ այլն: Դառնալ, բառնալ, համբառնալ բայերուն կատարեալը կ'ըլլայ. ԴԱՐՁԱՅ, ԲԱՐՁԱՅ, ՀԱՄԲԱՐՁԱՅ:

27. ՈՒԼ կամ ՆՈՒԼ վերջաւորութեամբ քանի մը բայ ալ կայ, որոնք երեք լծորդութիւններուն տակ չեն երթար եւ կիս մը գարսուղի են: Օրինակ. Թողորչ, կատարեալ՝ ԹՈՂԻ, կամ ԹՈՂՈՒՑԻ. Հրամայական՝ ԹՈՂ, ԹՈՂԷՔ կամ ԹՈՂՈՒՑԷՔ, Ընդունաց. ԹՈՂԱԾ կամ ԹՈՂՈՒՑԱԾ, ԹՈՂԵՐ կամ ԹՈՂՈՒՑԵՐ:

ՀՐԱՀԱՆԳ

26. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերը եւ Գ. ԼԸ-ԾՈՐԳՈՒԹԵԱՆ ԶՍՐՏՈՒԴԻՆԵՐՈՒՆ ՏՍԿ ԳԻԾ ՔԱՇԵՑԻՔ:

Եթէ չար գործած ես՝ ամօցի՛ր: Զձեզ չճանչցայ. ո՛րքան փոխուեր էք: Լաւ դիտցած բանը մարդ գիւրաւ չի մոռնար: Զեռնու՛նայն ետ դարձան: Հոս կեցի՛ր ու սաքցի՛ր: Ինչո՞ւ համար այդքան վախցար: Զսակի տօնը մօտեցած էր. երբ Յեսուս Երուսաղէմ մտաւ: Գողերը ձիերը գողցան ու գացին: Եթէ հասկցար՝ մօտեցէ՛ր իրեն և ըսէ՛ք զայդ:



ԺԷ. Գաս. — Անկամոն բայեր

28. ԱնկԱՆՈՆ կ'ըսուին ա՛յն բայերը, որոնք երեք կանոնաւոր շնորհոյբաններէն ոչ մէկուն կը հետեւին եւ Կասարեայի, Հրատաշականի եւ Ընդունեղութիւն Անցեալի մեջ անկամոն ձեւեր ունին: Օրինակ. Բերե՛ր՝ Կատարեալի մէջ չ'ըլլար բերե՛՛ծի՝ կ'ըլլայ բերի. Չբամայականը կ'ըլլայ՝ Բե՛ր (և ոչ Բե՛րէ):

29. ԱնԿԱՆՈՆ ԲԱՅԵՐՆ ԷՆ. ԲԵՐԵԼ, ԸՍԵԼ, ԸՆԵԼ, ԴՆԵԼ, ԶՍՐՆԵԼ, ՈՒՏԵԼ, ՏԵՍՆԵԼ, ՏՍՆԻԼ, ԲԱՆԱԼ, ԻՅՆԱԼ, ԵՐԹԱԼ, ԼԱԼ, ԳԱԼ, ՏԱԼ, ԱՌՆՈՒԼ:

30. ԳԱԼ, ԼԱԼ, ՏԱԼ, Սահմանական Ներկայի և Անկասարի մէջ ԿԸ ի տեղ ԿՈՒ կ'առնուեն. Օրինակ. ԿՈՒ գամ, ԿՈՒ սայ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

27. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Որտորդը անտառ գնաց, որս մը զարկաւ ու

տուն բերաւ: Մինչեւ հիմայ ի՞նչ ըրիր: Ա՛ռ սա գլխարկը գլուխդ դիր: Բանան կերած էք: Տղա՛յ, ինչո՞ւ կու լաս: Ժամը քանիին դպրոց եկար: Զըլացող աղուն կաթ չեն տար: Սղախինը դուռը բանալով բաւ՝ թէ ակերը տունը չէ: Սաւառնակը երեք հազար մետր բարձրութենէն վար ինկաւ ու ջախջախուեցաւ:

28. Բերանացի խոնարհեցե՛ք վարի բայերուն ԿԱՏՐԵԱԼՆԵՐԸ:

Երթալ, ընել, դնել, առնուլ, ուսել:

29. Բերանացի խոնարհեցե՛ք վարի բայերուն ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՆ:

Գալ, լալ, սալ:



ԺԸ. Գաս. — Ենթակայ

31. ԵՆԹԱԿԱՅ կ'ըսուի խօսքի մէջ գործողութիւն կասարողը: Օրինակ. Ժիրայր նամակ կը գրէ. այս խօսքին մէջ Ժիրայր գործողութիւն կատարող ու ենթակայ է:

32. ԵՆԹԱԿԱՅ կրնայ ըլլալ ԱՆՈՒՆ մը կամ ԴԵՐԱՆՈՒՆ մը: Օրինակ. ՍԱՐԳԻՍ կ'աշխատի. ԵՍ կ'աշխատիմ:

33. Ենթական միշտ ՈՒՂՂԱԿԱՆ հօլով կ'ըլլայ:

34. Ենթական կը գտնուի Ո՞վ հարցումը բնելով: Օրինակ. Մայրը իր գաւաղը կը սիրէ. ո՞վ կը սիրէ իր գաւաղը — ՄԱՅՐԸ (ենթակայ):

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

30. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ ԵՆԹԱԿԱՆ ՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Արտաչէս թաղաւոր է: Ս. Սահակ կաթողիկոս

եղաւ: Ս. Երսէս Շնորհալի շատ մը հոգեւոր երգեր
գրած է: Վաղարշապատ՝ Հայերու մայրաքաղաքն էր:
Հայրը կ'աշխատի գաւազնեբուն համար: Տղաք ի-
րենց դասերը կը սորվին: Ջորին ուժեղ ու անվախ
գրաստ մըն է: Դուք վարժարանին պատիւ կը բե-
րէք: Ինքը կը շահի՝ ինքը կ'ուտէ, Սսիոյ բնակ-
չութիւնը՝ Եւրոպայի բնակչութեան կրկինն է: Մեր
դասարանին առաջին աշակերտը՝ Յակոբն է:

31. Յաջորդ բայերուն մէյ մէկ ենԹ:ԱԿՆԹ
գտեք եւ խօսք շինեցեք:

Սիրել, վառել, նստիլ, լուսաւորել, մարել,
խմել, քնանալ, գալ, սառել, կարգալ, երգել, ցատ-
կել, մոնչել:

Օրինակ. ԵՍ ծնողս կը սիրեմ:



ԺԹ. Դաս. — Ներգործական բայ

35. ԵՆԲԴՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ կ'ըսուին ա'յն բա-
յերը, որոնց եկրակաւ գործողութիւնը ուրիշի մը
վրայ կը կատարէ: Օրինակ. Մայրը իր զաւակը կը
սիրէ. կատուն մուկ մը բռնեց:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

32. Օրինակեցեք հետեւեալ խօսքերը եւ ԵՆԲ-
ԴՈՐԾԱԿԱՆ ԲԱՅԵՐՈՒՆ ՏԱԿ ԳԻԾ ԲԱՇԵՑԵՔ:

Հացագործը հաց կ'եփէ: Մասվաճառը հորթ մը
ծախեց: Տղաք գնդակ խաղացին: Սղքաար դըռ-
նէդ մի՛ վռնաբեր: Սա պտուղներուն համն առէք:
Անասունները մի՛ ծեծէք: Բաժակը լեցո՛ւր ու խը-
մէ՛: Փոքր անասունները կը սիրեմ: Փութաջան ա-
շակերտը՝ ժամանակը պարապ չ'անցնիր:

33. Գտեք մէյ մէկ ԵՆԲԴՈՐԾԱԿԱՆ ԲԱՅ եւ խօսք

շինեցեք:
Օրինակ. Ջարդեղ — փայտ կը ջարդեմ:



Ի. Դաս. — Ձեզոք բայ

36. ՁԷՉՈՒՔ ԲԱՅԵՐԸ անո՛նք են, որոնց ենթական
գործողութիւնը ինքնիր վրայ կամ ինքնիրեն կը
կատարէ:

Օրինակ. Կ'երթամ, կը ինանամ: Մարդը իր
անկողնոյն մէջ մեռաւ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

34 Դրեցեք վարի խօսքերն ու ՁԷՉՈՒՔ ԲԱՅԵՐԵՆ
ՍՏՈՐԱԳԾԵՑԵՔ:

Մարդիկ սովորաբար մինչեւ եօթանասուն տա-
րի կ'ապրին: Հայաստանի մէջ քանի՞ ամիս մնա-
ցիք: Առողջ մարդը՝ չուտով չի յոգնիր: Մարդը՝ իր
կեանքին երրորդ մասը պառկելով ու քնանալով
կ'անցնէ: Առտու ժամը հինգին կ'արթննամ. Վաղը
ինքնաշարժով պատյաի պիտի երթանք: Եթէ ամէն
օր ժամ մը քալես՝ առողջ մարդ կ'ըլլաս:

35. Գտեք մէյ մէկ չեզոք բայ ու ԽՈՆՍՐՀԵՑԵՔ
ՁԱՆՈՆՔ:

36. Բերանացի ըսեք թէ յաջորդ բայերէն Ո՞ՐԸ
ՁԷՉՈՒՔ եւ Ո՞ՐԸ ԵՆԲԴՈՐԾԱԿԱՆ Է:

Դառնալ, առնուլ, յօրանջել, խնդալ, լալ, տալ,
աղալ, ծոխլ, նետել, ցատկել, վառել, թափել:



ԻԱ. Դաս.— Կրօնօրական բայ

37. ԿՐԱԻՈՐԱԿԱՆ Կ'ըսուին ա'յն բայերը, որոնց գործողութիւնը ուրիշի մը եկրակային վրայ կը կատարուի Օրինակ. Ծեծուիլ, սիրուիլ, ճանչցուիլ. Տղան ծնողքէն կը սիրուի. Բարի մարդը դիւրաւ կը ճանչցուի:

38. ԿՐԱԻՈՐԱԿԱՆ բայերը աներեւոյթի մէջ ՈՒՒԼ կը վերջանան.

ՀՐԱ. ՀԱՆԳՆԵՐ

37. Օրինակեցիք հետեւեալ խօսքերն ու ԿՐԱԻՈՐԱԿԱՆ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԿԾԵՑԷՔ:

Ծոյլ ու անկարգ աշակերտը՝ վարժարանէն կը վտարուի: Բարի ու փութաջան ուսանողն ալ ամէնքէն կը սիրուի ու կը գովուի. Բարեգործութիւնները դիւրաւ չեն մոռցուիր: Հիւանդները պէտք են խնամուիլ. Պաղ ջրով լուացուող մարդն աւելի արթուն կ'ըլլայ: Ամէն ծածուկ բան օր մը պիտի յայտնուի: Փոքր անասունները՝ մեծերէն կ'ուտուին: Լաւ աշակերտը կը վարձատրուի: Այսօր ճանճորոյթէն սիրաս կը նեղուի:

38. Ըսէք թէ վարի բայերէն որո՞նք կրաւորական, ներգործական կամ չեզոք են:

Ամբաստանուիլ, ծակել, իջնալ, քաղել, ծածկուիլ, մաղել, մարիլ, մկրտել, սպաննուիլ, սուրալ, փորել, քրտնիլ, երգել, տալ, մեռնիլ:



ԻԲ. Դաս.— Անցողական բայ

39. ԱՆՑՈՂԱԿԱՆ Կ'ըսուին ա'յն բայերը, որոնց ենթական՝ գործողութիւնը ուրիշի մը ընկէ կու տայ: Այսպէս. Ճանչցնել, կերցնել, կարել տալ: Չգետող

կարել տալ:

40. Ներգործական բայերուն վրայ—Ցեւել մասնիկն աւելցնելով անցողական կ'ըլլան: Օրինակ. Սորվիլ, սորվեցնել, հաւնիլ, հաւնեցնել:

41. Ներգործական բայերէն մաս մը՝ Ցեւել մասնիկին տեղ՝ ՏԱԼ բայով անցողական կ'ըլլայ. Օրինակ. Կարել ՏԱԼ, մաքրել ՏԱԼ:

ՀՐԱ. ՀԱՆԳՆԵՐ

39. Օրինակեցիք վարի խօսքերն ու ԱՆՑՈՂԱԿԱՆ ԲԱՅԵՐՆ ՍՏՈՐԱԿԾԵՑԷՔ:

Քոյրս իր սպեկմասանին կորսնցնել տուաւ: Մարդիկ կան, որոնք կը սիրեն իրենք զիրենք ամէնուն ճանչցնել. Իրիկունը դասը պիտի սորվեցնեն. Վերարկուղ կարել տուր: Դեղդ ո՞վ պիտի խմցնէ. Այսօր՝ մնացած աշխատանքը լմնցնել տուի: Աշխէն զլիարկին ձեւը փոխել տուաւ: Եղբայրդ իր դրամները գողցուց. Մարդիկ կան, որոնց խօսք հասկցնել չես կրնար:

40. Հետեւեալ ներգործական բայերն անցողական ըրէք թերականցի:

Սիրել, խմել, երգել, ձեծել, պահել, լուալ, մաղել, մանել, սորվել, տաղել: Օրինակ. Սիրցնել:



ԻԳ. Դաս.— Բային համաձայնութիւնը

42. Բայը իր եկրակային հետ ԴԵՄՔՈՎ ՈՒԹՈՒՈՎ կը համաձայնի:

43. Եթէ եկրական առաջին դիմի է՝ բայն ալ առաջին դիմի կը դրուի. նոյնպէս ալ եթէ երկրորդ կամ երրորդ դէմք է. Օրինակ. Ես կը խնդամ, դուն կը գործես, անոնք կը խնդան. (Չըսուիր. ԵՍ կը

խնդՍՍ:

44. Երբ եկրպիսն եզակի է՝ բայր եզակի կը կը դրուի, երբ յոֆնակի է՝ յոֆնակի: Օրինակ. Իշխանը կը հրամայէ, իշխանները կը հրամայեն. (Չ'ըսուիր. ԻՇԽԱՆԷ՛ կը հրամայեն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

41. Օրինակեցիք հետեւեալ խօսերը՝ ԲԱՅԵՐՆ ԵՆԹԱԿԱՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՀԱՄԱԶԱՅՆՅՆԵԼՈՎ:

Դուն բարկանալ: Մենք աշխատել: Ան խաղալ: Ես վազել: Դուք իյնալ: Անոնք ճաշել: Դուն յաղթուել: Մենք քնանալ: Վառարանը վառել: Թռչունը վանդակին մէջ երգել: Աղջիկները առանց աղմուկի խաղալ: Զինուորը քաջութեամբ պատերազմել: Թնդանօթները սոսկալիօրէն գոռալ:

Օրինակ. Դուն կը բարկանաս:

42. Բերանացի յոֆնակի ըրիք հետեւեալ խօսերը: Եղբայրդ կը ծխէ: Բարեկամս կը գրէ: Զին կը խխնջէ: Մանուկը կու լայ: Մայրը կը լուար: Աշակերտը պիտի պատժուի: Լո՛ւ: Ոտքի՛ ել: Պտոյտի գացի: Ուրիշը յարգէ՛: Դասս կը սորվիմ: Անիրաւ չըլլա՛ս:

Օրինակ. Եղբայրներդ կը ծխեն:



ԻԴ. Դաս.— Մակբայ

45. ՄԱԿԲԱՅ Կ'ըսուին այն բառերը, որոնք գործողութեան մը ՏԵՂԷ, ԺԱՄԱՆԱԿԸ, ԿԵՐՊԸ Եւ ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆԷԸ ցոյց կու տան, Օրինակ. ՀՈՍ նըստէ. ՎԱՂԸ եկուր. ԵՍԾՈՒԿ խօսէ: Ո՞ր ՉԱՓ գրեցիր:

46. Կործածական մակբայներն են.

Ի՞նչպէս, հազիւ, սասիկ, բռնի, շուտ, շատ, կամաց, բնաւ, երբե՛ք, անմիջապէս, ո՞ւր, ե՞րբ, միշտ,

աշտօր, վաղը, յառաջ, յետոյ, վար, վեր, ներսը, դուրսը, ո՞րչափ, քիչ, այո՛, ո՛չ, եւայլն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

43. Օրինակեցիք վարի խօսերը եւ ՄԱԿԲԱՅՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՒ:

Ի՞նչպէս կարեցիր այդ մրցանիշը: Հովը սաստիկ կը փչէ: Քիչ բարձիր, շուտ դարձիր: Երբ նամակս առնուս՝ անմիջապէս ճամբայ ել: Ո՞ւր դրիք մեռածին մարմինը: Ե՞րբ պիտի սորվիս դասերդ: Այսօր կամ վաղը կը մեկնինք դէպ ի Լոնդոն: Յառաջ կ'երթաք՝ թէ ես կ'երթաք: Ե՞րբը նստիլ կը հաճիր թէ դուրսը:

44. Հետեւեալ կիտերուն տեղ՝ ՄԱԿԲԱՅ ԴՐԷՒ ԲԵՐԱՆՍՅԻ.

Իրիկունը կը պառկինք, . . . կ'ելլենք: Հիմայ փոխ տուր՝ . . . կը վճարեմ: Կեանքիդ մէջ սուս խօսած ես . . . : Եկարը պէտք է . . . դիտել: Նաւակով գետին . . . անցան: Կը մեկնի՞ք թէ . . . կը մնաք: Վա՞ր կ'իջնանք՝ թէ . . . կ'ելլենք:



ԻԵ. Դաս.— Նախագրութիւն

47. ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆԷԸ բառ մըն է, որ ԱՆՈՒՆԻ կամ ԴԵՐԱՆՈՒՆԻ մը՝ իւր բային հետ ունեցած ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԷԸ կը ցուցնէ: Օրինակ. Ընկերին ՉԱՓ գրատէր. Բեզի ՊէՍ կը կարդայ:

48. ՆԱԽԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ հոշովուած բառի հետ կը գործածուին եւ այդ հոշովուած բառը՝ նախադրութեան ԽՆԴԻՐԸ կը կոչուի:

49. Դիխաւոր նախադրութիւններն են. Համար, հետ, չափ, վրայ, պէս, քով, ստանց,

quas, դիւ, առջեւ, ետեւ, մօտ, վերեւ, միջեւ, սակ,
մեջ, վար, վեր, ի վար, ի վեր, դեպ ի, եւայլն

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

45. Օրինակեցիք հետեւեալ խօսքերը եւ ՆԱԽԱ-
ԴՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Քեզի համար կ'աշխատիմ, մա'յր իմ: Ծնող-
քիս հետ այցելութեան գացի, Դարակին վրայ է
գլխարկդ, Տիգրա'ն: Ստիակի պէս կ'երգէ: Ազգ մը
առանց հայրենիքի կ'ապրի: Տիգրան Մեծ, Հռոմա-
յեցւոց դէմ կռուեցաւ: Սրտովս քեզի մօտ եմ: Չեռ-
քիդ մէջ ի'նչ ունիս: Մի' ըլլար ուրազի պէս մի'շտ
դէպ ի քեզ, մի'շտ դէպ ի քեզ, այլ եղիք սղոցի
պէս՝ մէկ դէպ ի քեզ, մէկ դէպ ի մեզ:

46. Ըսեք թէ յայտրոյ բառերէն ո՞րը ՆԱԽԱ-
ԴՐՈՒԹԻՒՆ եւ ո՞րը ՄԱԿԻԱՅ է 1):

Մօտ, հազիւ, ո՞ւր, միշտ, վերեւ, աակ, յա-
ռաջ, համար, դուրսը, պէս, ո՞րչափ, երբե՛ք, դատ,
դէմ, սաստիկ, քով, վաղը, չափ, շատ, հետ, մէջ,
այո՛, առանց, ո՛չ:

ԻՉ. Դաս. — Շաղկապ

50. ՇԱՂԿԱՊ կ'ըսուին ա'յն բառերը, որոնք
բառ բառի կամ խօսք խօսքի հետ կը կապեն: Օրի-
նակ. վերսնիկա եւ Մարգարիտ քոյրեր են, Շատ
վաղեց, ԲԱՅՑ չկրցաւ հասնիլ:

1) Նախադրութիւնը գոյականի հետ կը գործա-
ծուի, իսկ մակբայը՝ բայի հետ:

51. Գործածական Շաղկապներն են.

Եւ, ու, կաւ, նաեւ, այլեւ, աչ, կա'մ. . . կա'մ,
թե, թե՛ . . . թե՛, եթե, որ, բայց, սակայն, այլ, քան,
քանի, մանաւանդ, իսկ, որպէս զի, վասն զի, ո-
րովհետեւ, օրինակ, ևն:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

47. Գրեցիք վարի խօսքերը եւ ՇԱՂԿԱՊՆԵ-
ՐՈՒՆ ՏԱԿ ԴԻՄ ՔԱՇԵՑԷՔ:

Գարնան դաշտ ու հովիտ, լեռ ու բլուր ծա-
ղիկներով կը պճնուին: Վարդեր կը քաղես, սա-
կայն փուշերէն պիտի խայթուիս: Առած է. էշն
ի'նչ գիտէ թէ նուշն ի'նչ է, Պատերազմի գացողը՝
կա'մ պիտի յաղթէ, կա'մ պիտի յաղթուի: Ա'յնքան
չիտթեցաւ որ գիտցածն ալ մոռցաւ: Տեսէք սա
զուարթ մարդը. թէ՛ կ'երգէ թէ՛ կը պատմէ.

48. Ըսեք թէ հետեւեալ բառերէն որո՞նք ՇԱՂ-
ԿԱՊ եւ որո՞նք ՆԱԽԱԴՐՈՒԹԻՒՆ են.

Բայց, հետ, եթէ, վրայ, ու, մէջ, սրովհետեւ,
եւ, քով, դէմ, մօտ, նաեւ, առջեւ, ալ, պէս, դատ:



Ի՛՛. Դաս. — Չայնարկութիւն

52. ՉԱՅՆԱՐԿՈՒԹԻՒՆ կամ ՄԻՋԱՐԿՈՒԹԻՒՆ կը
կոչուին ա'յն բառերը, որոնք տեսակ տեսակ զգա-
ծումներ կը յայտնեն. այսինքն՝ ԲԱՂՁԱՆՔ, ՁԴՁՈՒՄ,
ՑՍԻ, ՎԱԽ, ՉԱՐՄԱՆՔ, Օրինակ. Ո՛, ի'նչ գեղե-
ցիկ բան է համերաշխութիւնը: Մե՛ղք որ շատ ուշ
հասկցանք ասիկա. ԵՐԱՆԻ՛ Թէ կանուխէն ըմբռնած-
ըլլայինք:

53. Գործածական ձայնարկութիւններն են.

Ո՛հ, վա՛խ, աւա՛ղ, երանի՛ թե, իցիւ՛ թե, վա՛յ,
մե՛ղք, ափսո՛ս, ա՛խ, բա՛րե, ա՛հ, ա՛յ, վա՛շ, օ՛հ,

կեցցե՛ս, ապրի՛ս, վա՛խ վա՛խ, ա՛յ ա՛յ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

49. Օրինակեցե՛ք հետեւեալ խօսքերն ու ՁԱՅ-
ՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՏՈՐԱԳԻՏԵՑԻՔ:

Երանի՛ թէ երբեք սուա խօսած չըլլայիր: Ա-
ւա՛ղ, ո՛րքան ժամանակ կարսնցուցի: Վա՛խ, տա-
նիքէն ինկեր մեռեր է: Իցիւ՛ թէ անգամ մըն ալ
չպատահէր այդպիսի բան: Վա՛յ այն ժողովուրդին,
որ գլուխ ու կառավարութիւն չունի: Սղամանդա-
զարդ մատանին դողցնել տուեր է, մե՛ղք: Ա՛խ, ե՞րբ
հայրենիքս տեսելու ուրախութիւնը պիտի ունե-
նամ: Օ՛ն, յոռա՛ջ շարժեցէք: Կեցցե՛ն հայրենիքին
համար կռուողները:

50. Բերանացի մէյ մէկ խօսք շինեցե՛ք յաջորդ
ձայնարկութիւններով:

Ափսս՛ս, ո՛հ, ա՛հ, ապրի՛ս, վա՛յ, վա՛խ, ա՛յ,
ողջո՛յն:

Օրինակ. Սիրեղի հայրենիք, ողջո՛յն քեզ:



ԻԸ. Դաս. — Կիսադուրիւն

54. Խօսքի մը զանազան մասերն իրարմէ զա-
տելու համար այլեւայլ նշաններ կը գործածենք,
որոնք ԿԷՏ կը կոչուին և անոնց գործածութեան ալ
ԿԻՏԱԴՐՈՒԹԻՒՆ կըսենք:

55. ԿԻՏԱԴՐՈՒԹԵԱՆ զլիաւոր նշաններն են.

- 1. ԲՈՒԹ (՛), 2. ՄՏՈՐԱԿԷՏ (ւ), 3. ՄԻՋԱԿԷՏ (ւ),
- 4. ՎԵՐՋԱԿԷՏ (ւ):

56. ԲՈՒԹԸ (՛) կը ցուցնէ թէ շատ քիչ կանգ
առնուէ: Օրինակ. Բարիք ընողը՝ չարիքի սպասէ:

57. ՄՏՈՐԱԿԷՏԸ (ւ) ամբողջ խօսքի մը կարճ
նախադասութիւնները իրարմէ կը զատէ՝ եւ մի-

եւնոյն կարգի բառերը իրարմէ կ'անջատէ: Օրի-
նակ. Արագած, Սիփան, Վարագ, Գրգուռ հայկական
շէռներ են:

58. ՄԻՋԱԿԷՏ կամ ԿԷՏ (ւ) կը դնենք ստորա-
կէտէն քիչ մը աւելի շունչ առնլու եւ ուրիշին
խօսքն յոռաջ բերելու ատեն: Օրինակ. Խորաբիւ
առաջնորդն ըսաւ. բեռները շաւ մը կասած՝ կառ-
վերուն վրայ բարձեք. արեւն մէկ կառքին մէջմէկ
զինեալ պահապան դիմէ ու ճարտար էլիք:

59. ՎԵՐՋԱԿԷՏ (ւ) կը դրուի խօսքի մը վերջը
կատարեալ հանգիստ առնլու համար, Օրինակ. Այս-
պես որոշեցին ու ճարտար էլան:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

51. Գրեցե՛ք վարի խօսքերը եւ ԻՄԱՍՏԻՆ ՀԱ-
ՄԵՄԱՏ ԿԷՏԵՐԸ ԴՐԻՔ:

Բաճիքի հայ նշանաւոր վիպագիր մըն է Ռու-
բէն Զարդարեան մշակուած գեղեցիկ լեզու մը գոր-
ծածած է իր գրութիւններուն մէջ Հ Գաթըճեանի
կը պարտինք սկեղարեան հայ լեզուի գիւրը Կեսար
Հոռովմայեցուց զօրավարը թշնամիներուն վրայ ա-
բազ յաղթանակէ մը յետոյ սա համառոտ նամակը
գրեց ծերակոյտին Եկայ տեսայ յաղթեցի Դեռ շատ
բան ունէի ըսելիք

Օրինակ. Բաճիքի՛ հայ նշանաւոր վիպագիր է:

52. Բերանացի մէյ մէկ խօսք ըսէ՛ք, որոնց մէջ
ԲՈՒԹ, ՄՏՈՐԱԿԷՏ եւ ՎԵՐՋԱԿԷՏ գտնուի:



ԻԹ. Դաս. — Ստորգելի

60. Անուն մը Դերանուն մը կամ Սծական
մը, որ էական բային հետ կը գործածուի կամ անոր
կը վերաբերի՝ ՄՏՈՐՈՒԹԵԼԻ կը կոչուի: Օրինակ. Բա-

զէն քոչուն է: Այդ գիրքն իսկ է. Մեղուն աշխատանք է:

61. Ստորոգելին ենթակային ինչ կամ ինչպիսի ըլլալը կը ցուցնէ եւ ի՞նչ կամ ի՞նչպիսի հարցումով կը դանուէի:

62. Ստորոգելին սովորաբար ուղղակիակ հնորով կ'ըլլայ եւ եզակի կը մնայ: Օրինակ. Չին ու Չորին գրաստ են. Այս կեռասները խակ են:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ


53. Օրինակեցիք հետեւեալ խօսքերն ու ՍՏՈՐՈ-ԳԵԼԻՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Առիւծը վեհանձն է: Հայաստանի հողը բերրի է: Գազիկ թագաւոր էր: Եղբայրդ բժի՞շկ պիտի ըլլայ: Ս. Գրիգոր մեր ազգին Լուսաւորիչն է: Գարեջուրը հին Հայերուն ծանօթ էր: Աղձնիք հայկական նազանդ էր: Յովհաննէս Թումանեան՝ սիրուած բանաստեղծ է: Ծնողքիդ անդրանիկ զաւակը դո՞ւն ես: Այս գրիչը քուկդ է:

54. Հետեւեալ ենթակաւերուն մեկ մեկ ՍՏՈՐՈ-ԳԵԼԻ րեւիք բերանացի:

Վարդը ծաղիկներուն . . . է: Արծաթին գոյնը . . . է: Եկեղեցին . . . է: Եթէ ուզես՝ կրնաս . . . ըլլալ: Վաղը այս ժամուն . . . պիտի ըլլամ, Հայաստան մեր . . . է: Ծաղիկին հոտը ամէնուն . . . է: Այտընեան, աշխարհաբար քերականութեան մեծ հեղինակը, վիեննական Միլիթարեանց . . . էր:

Օրինակ. Վարդը ծաղիկներուն քագունիկն է:



Լ. Դաս.— Յասկացուցիչ Յասկացեալ

63. ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉ կը կոչուի այն սեռական հնորով, որ բանի մը որո՞ւն ըրալը կը ցուցնէ: Օրինակ. Թագաւորին թագը. Դրակ բանալին. Աշխարհի ունայնութիւնները:

64. Խօսքի մէջ յասկացուցիչը կը դանուէ ուրո՞ւն կամ ի՞նչ բանին հարցումով: Օրինակ. Կարպիսին գրեւոր. որո՞ւն գրքերը — Կարպիսին (յասկացուցիչ): Ծաղիկին գոյնը. ի՞նչ բանին գոյնը — ծաղիկին (յասկացուցիչ):

65. Յասկացուցիչին վերաբերած անունը ՅԱՏԿԱՑԵՍԼ կը կոչուի: Օրինակ. Իշխանին քագը. Թոչնոյ քոյնը:

66. Յասկացեալը ամէն հարով կրնայ ըլլալ:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

55. Օրինակեցիք վարի խօսքերը եւ ՅԱՏԿԱՑՈՒՑԻՉՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Ծովուն ջուրը աղի է. Թագուհւոյն թագը գեղեցիկ է: Մարդուն կեանքը կարճատեւ է: Պատուահանին ապակին թափանցիկ է: Տէրուրեան օրէնքները խիստ են: Մեր տունը բարձունքի վրայ է: Ազահին սիրտը հարստութեամբ չի յագեանար: Կատուին խաղը՝ մուկին մահ է: Արծուին կտուցը կոտմընկէն է: Աւարայրի դաշտը՝ հայ քաջերու արիւնով ներկուած է: Հայ Արշակունեաց դրամները յունարէն գրով գրուած էին: Կատրամիտէ թագուհւոյն գրել տուած աւետարանը՝ ամենաճիշտն է:

56. Բերանացի մեկ մեկ յարմար յասկացուցիչ գտիք հետեւեալ յասկացեալներուն:

Բոյնը, գոյնը, թոյնը, ձագը, կարագը, մարագը, մատը, թաթը, զագաթը, բուքը, շուքը, թուքը, սուգը, գեար, նետը, պետը, խոտը, կոթը, հօտը, աղօթքը:

Օրինակ. Սոխակին բոյնը:

ԼԱ. ԴՍԱ. — Բայեռուն խնդիրը — սեռի խնդիր

67. ԽՆԴԻՐԸ բային իմաստը կը լրացնէ: Օրինակ. անորոշ է երբոր ըսեմ՝ կ'ուսեմ (որովհետեւ ուսեղ բայը հոս խնդիր չունի): որոշ է, երբոր ըսեմ՝ հաց կ'ուտեմ (հաց՝ ուտել բային խնդիրն է և անոր իմաստը կը լրացնէ):

68. Երկու տեսակ խնդիր կայ. Սեռի ԽՆԴԻՐ և ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ:

69. Սեռի ԽՆԴԻՐ. — Սեռի ԽՆԴԻՐԸ հայցական հորով կ'ըլլայ եւ զո՞վ կամ ի՞նչ բանը հարցումով կը դանուէ: Օրինակ. Ընկերս կը սիրեմ. զո՞վ կը սիրեմ — ընկերս (հայցական հարցով և սեռի խնդիր). Գրիչս կտարեցի. ի՞նչ բանը կտարեցի — գրիչս:

70. Խնդիր սեռի կ'առնուեն ներգործական բայերը:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

57. Օրինակեցե՛ք վարի խօսքերը եւ Սեռի ԽՆԴԻՐՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Հայրենիքս կը սիրեմ: Գիտնական մարդիկը կը յարգենք: Գեար մեր արտերը կ'ողողէ: Ոստիկանը քաղաքը պիտի պահպանէ: Եթէ իշխան ես՝ պէտք ես երկիրդ լաւ կառավարել: Ուսուցիչը ծոյլ ու չար աշակերտը կը պատժէ: Մեղուն ծաղիկներուն հիւթերը կը ծծէ և անոնցմով մեղր կը պատրաստէ: Գիտե՞ս թէ ո՞ր գործարարը կործանեց Կարգեղանը: Ծնողքդ պատուէ՛ երկար պիտի ապրես:

58. Յայտնող բայերուն յարմար Սեռի ԽՆԴԻՐ գտե՛ք քերականացի.

Փայտահատը անտառէն քսան . . . կարեց: Կոշակարը քեզի գոյգ մը . . . պիտի կարէ: Բոյրս . . . կը նուազէ, եղբայրս ալ . . . Օրը քսանուչորս . . . ունի կովը, ոչխարն ու այծը մեզի . . . կու տան: Զապէլ իւր . . . կը սիրէ և . . . կը յարգէ: Վարուժան երէկ իւր . . . լաւ սորված

եւ ուսուցիչէն . . . ընդունած էր: Ինքնահոս . . . կորսնցուցի:



ԼԲ. ԴՍԱ. — Բնութեան խնդիր

71. ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ կը կոչուին ընդհանրապէս Տրական, Բացառական եւ Գործիական հօլովները, Օրինակ. Զիռն խոստուի. Պատուհանեկ ցատկեց. Ուրագով կը աաչեն:

72. Բնութեան խնդիրը կը դանուէ որո՞ւն կամ ի՞նչ բանի (արական հօլով), որով՞ կամ ի՞նչ բանեկ (բացառական հօլով), և որո՞վ կամ ի՞նչ բանով (գործիական հօլով) հարցումներով:

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

59. Գրեցե՛ք յայտնող խօսքերը եւ ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՍՏՈՐԱԳԾԵՑԷՔ:

Ուսուցիչը Սեղբակին բարենիշ մը տուաւ: Փոքրերը մեծերուն կը նային եւ անոնցմէ օրինակ կ'առնուն: Բարիները՝ իրենց օրինակով քարոզ կուտան չարերուն: Այս կերպսը ձեզմէ գնած եմ: Խորքով ջուր մի՛ կրեր, կ'ըսէ հայ ժողովրդական առածը: Դոնէն կը վառտես՝ պատուհանէն ներս կու գայ: Հպարտը՝ ինքնիրմով լեցուած է: Խոսքովին՝ Տրդատ յաջորդեց, կաթէն բամբակ շինել սորվեցուց պատերազմը: Հայրենիքը ձեզմով պիտի պարծենայ:

60. Վարի հարցումներուն տեղ յարմար ԲՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐ դրե՛ք քերականացի:

Լաւ աշակերտը (ի՞նչ բանի) ուշադիր կ'ըլլայ: Զուկը (ուսկե՞ց) կը հոտի: Վառարանը (ինչո՞վ) կը վառի: Կաթը (որմէ՞) կը կթեն: Խոսքը (ինչո՞վ) կը հնձեն: Բարենիշը (որո՞ւն, կու տան: Ծառերը (ինչ-

չո՞վ) կը զարդարուին: Ծոյյ աշակերտը (որմէ՛) կը
 վախնայ: Դեղը (որո՞ւն) օգտակար է: Զինուորը
 (ինչո՞վ) կը կռուի:



«Ազգային գրադարան»

NL0247438

7300

1850